ԻՄ ԳՐԻՉԸ—ԻՄ ԾԱՌԱՆ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

Հեզաբարոյ և սիրելի
Մի հատ ունիմ ես ծառայ,
Որ իւր տիրոջ մինչ գերեզման
Հաւատարիմ կը մնայ։
Միշտ ուշաձիս կատարում է,
Հընազանդ է իմ կամքին.
Համբերութեամբ և անտրրտունջ
Խընամում է իմ հոգին։

—

Երբ սև թախիծ և դառն ցաւեր
Ինձ տանջում են չարաչար,
Ցուսահատած նա իմ սրտին
Միշտ լինում է մըխիթար։
Ինչ բորբոքւած հրաբուխի պէս
Պըլպըլում է կըրծքիս տակ,
Նա խըլում է և աշխարհին
Նա յայտնում է համարձակ։

—

Թող իմ բաղդըն այսպէս յամառ
Օտար մընայ յաւիտեան,
Հոգու հանգիստ կը պարգևէ
Ինձ մըտերիմ իմ ծառան։
Թող ես երբէք չը ճաշակիմ

Վայելչութեան բաժակից,—
Պատանեկան ցընորքներով
Թող չը վառեմ բընաւին.
Ծառայ ունիմ հաւատարիմ,
Որ երկնային սահմանից
Ոգեւորիչ հուր կը թափէ,
Կը բորբոքէ իմ հոգին։

—

Դրժնեայ զբրկանք և կոյր ծաղրանք
Թող դաշնակցեն իմ դիմաց,
Թշնամութիւն և զբրպարտանք
Թող ինձ քըշեն կուրացած.—
Ամենուրեք՝ հրեշտակի պէս՝
Ինձ կը հետևէ ժըրաջան
Եւ համբերող և սիրտ տըւող
Իմ գրիչը, իմ ծառան։

Թիֆլիս, 1888 թ., 22 յունիսի։